ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 197
16 ապրիլ 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 35-Ա -36-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 35-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,10.06.2008թ <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ բնակելի տունը,դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, իսկ առկա բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով Լորուտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 27 հունիսի 1991թ. N 4 արձանագրության քաղվածքը,<<ԱԿԱ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասում գծագրված շինությունների քանդված լինելու վերաբերյալ եզրակացությունը,հողամասի և շինության հատակագծերը և Խաչիկ Գրիգորի Կարապետյանի կողմից լիազորված անձ Երվանդ Գառնիկի Ասրյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Վերականգնել և ճանաչել Խաչիկ Գրիգորի Կարապետյանի /ծնված 13.08.1955թ. /սեփականության իրավունքը Թումանյան համայնք,Լորուտ գյուղ,փողոց 1, թիվ 7 հասցեում գտնվող /06-045-0038-0018 ծածկագրի/ 0,3892 հա հողամասի և հողամասում 1988 թվականին կառուցված 335.6քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան նկատմամբ՝որպես օրինական գույք:
2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:
4.Բնակելի տանը տրամադրել << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գյուղ Լորուտ,1-ին փողոց, թիվ 7>> հասցեն:
5.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:
6. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 1-ի N 31-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 36-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և հաշվի առնելով Լոռու մարզպետի 14.03.2019թ. թիվ 01/107.4/01739-2019 գրությունը՝ որոշում եմ.

1.Հաստատել Թումանյան համայնքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի գործունեության արդյունքների ամփոփման ժամանակ արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշմամբ հաստատված պլան-ժամանակացույցի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Ե.Շաքարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

20 19 թ. ապրիլի 10

ք.Թումանյան

Հավելված

Թումանյան համայնքի ղեկավարի

2019թ. ապրիլի 10-ի թիվ 36 – Ա որոշման

ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

հ/հ	Հանձնարարականներ	Կատարող	Կատարման ժամկետը	Նշումներ
1.	Համայնքի ջրամատակապապման համակարգի ցանցի վրա անհրաժեշտ հակահրդեհային ջրածորանների (հիդրանտների) կամ այդ նպատակի համար մոնտաժված լցավորող ծորակների տեղադրում և շահագործում: Չգործող հրշեջ-հիդրանտների վերանորոգում	<<Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն, վարչական ղեկավարներ	Տարվա ընթացքում	
2.	Թումանյան համայնքի կապի և ազդարարման համակարգի արդիականացում՝էլեկտրական շչակների ձեռքբերում և կենտրոնացված ազդարարման համակարգի միացում	Համայնքի ղեկավարի օգնական, վարչական ղեկավարներ	Տարվա ընթացքում	
3.	Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանների մշակում	Համայնքի ղեկավարի տեղակալ, օգնական	Մինչև 01.12.2019թ.	
4.	Համայնքի զարգացման ծրագրերում և բյուջեում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչների ու միջոցառումների ընդգրկում	Համայնքի ղեկավարի տեղակալ,գլխավոր մասնագետ-հաշվապահ	Մինչև 01.12.2019թ.	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԶԱՎԱՐՅԱՆ